

## ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՍԱՀՅԱՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

### Ա. Է. ԳՈՎԱԿԻՄՅԱՆ

Քնարական բանաստեղծության կառուցման գործում կարևոր նշանակություն ունեն չափածո խոսքի ուղիղ և իմաստային ամենամեծ միավորները՝ բանաստեղծական տները: Բանատունը, ինչպես խոսքի կառուցման տաղաչափական, շարահյուսական, հնչյունային ավելի փոքր միավորները (ոտք, անդամ, վանկ, բառ, տող, հանգ, հնչերանգ և այլն), լինելով պարբերաբար կրկնվող ուղիղ միավոր, պայմանավորում է խոսքի միասնական ուղիղ (կշռայթի) ամբողջականությունը: Բ. Տոմաշևսկին նկատում է, որ տներով կառուցված բանաստեղծություններում ակնառու է որոշակի չափական և ուղիղ-շարահյուսական հատկանիշների ճշգրիտ կրկնությունը, որոնցով ստեղծագործությունը բաժանվում է ավարտուն, նույնական խմբերի<sup>1</sup>: Նա բանատան հիմնական հատկանիշներ համարում է հանգերի որոշակի հաջորդականությունը, երկար և կարճ տողերի համաչափ դասավորությունը և ուղիղական-արտասանական ավարտվածությունը:

Ընդհանրապես, բանաստեղծական կառուցվածքի բոլոր տարրերը, այդ թվում և տունը, իրենց բնույթով ու ձևերով անխզելիորեն կապված են բովանդակության հետ և առաջին հերթին պայմանավորված են հնչերանգով<sup>2</sup>: Ուստի տունը, որպես շարահյուսական-արտասանական մի ամբողջություն, կարող է բաղկացած լինել երկուսից տասներկու, երբեմն նաև ավելի տողերից: Իսկ տան կառուցվածքի կոնկրետ ձևը պայմանավորված է կոնկրետ ստեղծագործության ընդհանուր թեմատիկ-բովանդակային զարգացումով ու բնույթով:

Բանաստեղծական տների մեծ մասը հիմնականում մեկ լրիվ ուղիղական պարբերություն է: «Ուղիղական պարբերություն հասկացությունը գործում է կանոնավոր, փակ համաչափ կառուցվածքի բանաստեղծություններում և իր մեջ ներառում ուղիղական բոլոր առկա գործոնների, տարրերի համակցության մեկ անանջատ ամբողջությունը կամ ուղիղական շարժման մեկ լրիվ ալիքը»<sup>3</sup>:

Բնական է, որ բանատան կառուցվածքի և տաղաչափական դրսևորումների առումով դժվար է նոր գաղտնիքներ հայտնաբերել: Դրանք հիմնականում գրական ավանդույթով հաստատված և կայունացած իրողություններ են, որոնք գոյություն ունեին և՛ վաղ, և՛ մոտ անցյալի հայոց բանաստեղծության մեջ<sup>4</sup>: Այս առումով կարող է տպավորություն ստեղծվել, թե մեր օրերում բանաստեղծի չափածո խոսքի կառուցման առանձնահատկություններին անդրադառնալը առանձնակի կարևորություն չունեցող աշխատանք է: Սակայն մենք համամիտ ենք էդ. Ջրբաշյանի այն կարծիքին, որ առանձին հեղինակների բանաստեղծության կառուցման առանձնահատկությունների բացահայտումը նպաստում է նաև նրանց բանաստեղծական մտածողության յուրահատկության՝ քնարական պատկերի, քնարական ապրումի ընտրության, ծավալման ու կառուցման ձևերի բացահայտմանը<sup>5</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Բ. В. Томашевский, Стих и язык. Филологические очерки, М., 1959, էջ 206:

<sup>2</sup> Տե՛ս էդ. Ջրբաշյան, Պոետիկայի հարցեր, Եր., 1976, էջ 351:

<sup>3</sup> Դ. Գասպարյան, Սովետահայ պոեզիայի տաղաչափությունը, Եր., 1979, էջ 346:

<sup>4</sup> Տե՛ս Յու. Ավետիսյան, Արևմտահայ բանաստեղծության լեզուն, Եր., 2002, էջ 468:

<sup>5</sup> Տե՛ս էդ. Ջրբաշյան, Վահան Տերյանի տաղաչափական համակարգը, Եր., 1995, էջ 111:

Հ. Սահյանի տարբեր ժողովածուներում հաճախ բանաստեղծական տարբեր շարքեր կան առանձին բանաստեղծություններ կրկնվում են, ուստի առավել նպատակահարմար գտանք մեր ուսումնասիրության համար դիտարկել նրա «Երկերի ժողովածու» երկհատորյակը<sup>6</sup>, որում զետեղված է 1000 բանաստեղծություն (հատոր 1՝ 423, հատոր 2՝ 577): Երկհատորյակում տեղ են գտել բանաստեղծի ինչպես առաջին շրջանի (1939-1960 թթ.)՝ «Հայաստանը երգերի մեջ», «Որտանի եզերքին», «Ես պարզ տեսնում եմ»<sup>7</sup>, «Այստեղ սարեր կան սարերի վրա», «Ես այն եմ եղել», «Տար ինձ ժամանակ», «Ծիծեռնակները ուշացան», «Ես ձեզ եմ թողնում», «Ուղեկիցներս», «Ես չեմ կարող», «Մայրամուտից առաջ», «Ոչ էս գլխից, ոչ էն գլխից», «Բանաստեղծները Լուսնի վրա», «Եվ էն գլխից և էս գլխից» հիմնական ժողովածուներն ու շարքերը, այնպես էլ երկրորդ շրջանի (1961-1984 թթ.) մի շարք ժողովածուներ՝ «Քարափների երգը», «Սեզամ, բացվիր...», «Իրիկնահաց», «Արտասահմանյան տետրերից», «Կարմիր-կանաչ աշուն»: Քանակալից ծանրաբեռնվածությունից խուսափելու նպատակով բանաստեղծի մյուս ժողովածուներին, հատկապես 1985-ից հետո լույս տեսածներին՝ «Դաղձի ծաղիկ», «Քարե պատարագ», «Ինձ բացակա չդնեք» են, կանդորադաճանք այլ առիթներով:

Համո Սահյանը բազմիցս նշել է, որ ինքը քննարկության մեջ, այսպես կոչված, դասական ավանդների կողմնակից է՝ համոզված լինելով, որ այդ ավանդները չեն սպառել իրենց զարգացման հնարավորությունները<sup>7</sup>: Դրանով էլ բացատրվում է բանատան կառուցման խնդրին դասական ավանդների դիրքերից նրա մոտեցումը: Պատահական չէ, որ նա XX դարի երկրորդ կեսի հայոց բանաստեղծության մեջ այն եզակի ստեղծագործողն է, որի ամբողջ ստեղծագործությունը հենվում է դասական ավանդների վրա, ավանդներ, որոնք XX դարավերջի պոեզիայում արդեն անցած փուլ են նշանավորում, քանի որ այլևս չկան ավանդապահության ու նորարարության միջև հավասարակշռությունը պահող ստեղծագործողներ: Ավանդակալությունը դրսևորվում է անգամ նրա ստեղծագործության մեջ այլատեսակ բանաստեղծական կառույցների, ձևերի սակավության փաստով: Նկատի ունենք ոչ թե մեծ կտավի քնարական ժանրերը (պոեմ, բալլադ ևն), այլ այն, որ բանաստեղծի համար եվրոպական պոեզիայում լայն տարածում ունեցող կայուն բանաստեղծական ձևերը, օրինակ՝ սոնետը, տրիոլետը, տերցիները, ռոնդոն, նույնպես և արևելյան պոեզիայից հայտնի ձևերը՝ գազել, մոխամմազ, քառյակ ևն, ստեղծագործական առաջնահերթության ոլորտից դուրս են: Բավական է նշել, որ խնդրո առարկա երկհատորյակում նշված այլազան ձևերից զետեղված են ընդամենը 20 տրիոլետ, 2 սոնետ, 11 քառյակ՝ 33 բանաստեղծություն (3.3 %): Սակայն, արտաքուստ մնալով «ավանդական» չափերի շրջանակում, բանաստեղծը կարողացել է խորությամբ ու արվեստով բացահայտել տաղաչափական ներքին, առաջին հայացքից անտեսանելի ու «չսպառված» հնարավորությունները՝ ըստ այդմ անժխտելիորեն «նորարարական» դարձնելով իր ստեղծագործությունը:

<sup>6</sup> Տե՛ս Համո Սահյան, Երկերի ժողովածու, բանաստեղծություններ, երկու հատորով, հհ. 1, 2, Եր., 1984: Այսուհետև այս երկհատորյակից հղումները կտրվեն տեքստում. կնշվեն հատորն ու էջը:

<sup>7</sup> Ի դեպ, այս շարքի բանաստեղծությունները թեմատիկ շեղում ունեն Հ. Սահյանի բուն ստեղծագործությունից և տուրք են խորհրդային շրջանի գաղափարական ու կուսակցական կադապարների: Այսուհանդերձ, հարկ համարեցինք այս շարքին ևս անդրադառնալ, քանի որ մեր խնդիրը զուտ կառուցվածքային քննություն կատարելն է:

<sup>7</sup> Տե՛ս «Գրական թերթ», 28 մարտի, 1969, № 13:

Այժմ անդրադառնանք այն խնդրին, թե հավասարատող կամ կանոնավոր տների ինչպիսի ձևեր է գործածել Հ. Սահյանը, և որոնք են նրա համար նախապատվելի: Նշենք, որ հավասարատող տներով բանաստեղծությունների թիվը 418 է (ընդհանուրի 41.8 %-ը, տե՛ս աղյուսակներ 1, 2): Ամենից առաջ աչքի է զարնում *չորստողանի* բանատների առատությունը. քառատողերով է կազմված 339 բանաստեղծություն (ընդհանուրի 33.9 %-ը և հավասարատողերի 81.1 %-ը):

**Աղյուսակ 1**

**Հավասարատող տներով բանաստեղծությունների տեսակներն ու քանակը  
Հ. Սահյան, Երկերի ժողովածու, հ. 1**

Տան տեսակը \ Տների քանակը	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12 և ավելի	Ընդամենը
	2-տողանի	-	-	-	-	2	1	-	-	-	-	-	
3-տողանի	-	-	-	1	1	-	1	-	-	-	-	-	3
4-տողանի	-	24	29	31	22	18	12	12	4	5	5	6	168
5-տողանի	-	-	1	2	1	-	-	-	-	-	-	-	4
6-տողանի	-	3	-	2	-	-	-	-	1	-	-	-	6
7-տողանի	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
8-տողանի	-	-	1	1	2	2	-	-	-	-	-	-	6
9-տողանի	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
10-տողանի	-	-	-	-	-	1	-	-	-	-	-	-	1
11-տողանի	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
12-տողանի	-	-	-	1	-	-	-	-	-	1	-	-	2
Ընդամենը	-	27	31	38	28	22	13	12	5	6	5	6	193

**Աղյուսակ 2**

**Հավասարատող տներով բանաստեղծությունների տեսակներն ու քանակը  
Հ. Սահյան, Երկերի ժողովածու, հ. 2**

Տան տեսակը \ Տների քանակը	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12 և ավելի	Ընդամենը
	2-տողանի	-	-	3	4	2	1	-	1	1	-	1	
3-տողանի	-	3	1	2	-	1	1	-	-	-	-	-	8
4-տողանի	-	46	32	28	25	12	12	5	3	3	3	2	171
5-տողանի	-	2	1	-	1	1	-	-	-	-	-	-	5
6-տողանի	-	5	6	2	-	1	-	-	-	-	-	-	14
7-տողանի	-	1	-	-	1	-	-	-	-	-	-	-	2
8-տողանի	-	5	1	-	-	-	-	-	-	-	1	-	7
9-տողանի	-	-	-	-	-	1	-	-	-	-	-	-	1
10-տողանի	-	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	1
11-տողանի	-	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	1
16-տողանի	-	-	-	-	1	-	-	-	-	-	-	-	1
Ընդամենը	-	64	44	36	30	17	13	6	4	3	5	3	225

Ընդհանրապես համաշխարհային պոեզիայում քառատողը բանատան ամենատարածված ձևն է, որտեղ տունը և դիտմական պարբերությունը մեծ մասամբ համընկնում են, քանի որ այն շարահյուսական-արտասանական ավարտուն միավոր է, որը, լինելով ծավալով ոչ շատ փոքր և ոչ շատ մեծ, ամենաարդյունավետ միջին չափն է բանաստեղծական որևէ պատկեր կամ խոհ բացահայտելու համար<sup>8</sup>: Քառատողը լավագույնս ծառայում է տողերի միջև համաչափություն պահպանելու խնդրին: Նույնը վերաբերում է նաև հայ միջնադարյան ու նոր շրջանի պոեզիային: Մասնավորապես, քառատող տներով է գրված Հ. Թումանյանի բանաստեղծությունների 78.5 %-ը (չհաշված պոեմներն ու բալլադները)<sup>9</sup>, Վ. Տերյանցի ստեղծագործության 68.9 %-ը<sup>10</sup> ևն:

Հ. Սահյանի 4-տողանի կառուցվածքով բանաստեղծությունների մեջ ամենատարածվածը երկու (70), երեք (61), չորս (59) և հինգտնանի (47) բանաստեղծություններն են: Ավելի քիչ են վեց (28), յոթ (24) և ութտնանի (17) ոտանավորները, իսկ ինը և ավելի տուն ունեցողները սակավաթիվ են: Քառատողերում գործածված են հանգավորման բոլոր տեսակները՝ կից, խաչաձև, օղակաձև, միատարր, խառը:

*Խաչաձև հանգավորում (abab).*

Դու դեռ իրավունք չունես լռելու,  
Այս մեծ անպրոպը թող քեզ նորոգի,  
Դեռ այնքան լույսեր ունես փռելու,  
Խոսքով կռելու հավատ ու հոգի (1, 217):

*Կից հանգավորում (aabb).*

Իմ երազները՝ ծիածանաթև  
Իմ երազները շատ էին թեթև:  
Իմ երազները թևին տվեցին,  
Դեպի ավետյաց երկիր չվեցին (1, 330):

*Օղակաձև հանգավորում (abba).*

Հոգնած տարիքս ուերիս առնեն,  
Հոգնած ոտքերս քարշ տալով գնամ,  
Գնամ մեր հին տան դռները բանամ,  
Հին երազներիս անթեղը խառնեն (2, 367):

*Միատարր հանգավորում (aaaa).*

Մի մեծ գերդաստան նրա հույսին էր,  
Գարունը բացվեր՝ լուծը ուսին էր,  
Ծակատին շարմաղ լիալուսին էր,  
Եզն այսպիսին էր (2, 7):

*Խառը հանգավորում.*

aaba

Ջրաղացիս տեղը քեղ է բուսել,  
Եղինջների մի նոր ցեղ է բուսել...  
Ընկուզենու կոճղին թիկնած եկվոր ժայռի  
Շուրթի վրա մացառ-քեղ է բուսնել (2, 310):

<sup>8</sup> Տե՛ս էդ. Ջրբաշյան, Պոետիկայի հարցեր, էջ 351:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 355:

<sup>10</sup> Տե՛ս էդ. Ջրբաշյան, Վահագն Տերյանցի..., էջ 112:

abcb

Զրնգում էր կանաչ քամին,  
Դաշտում լայնատարած,  
Իմ մանկության կանաչ երգը  
Բերանացի արած (1, 303):

abbc

Ամպի խուլ պայթյունից  
Ջյունը խրտնեց քարին,  
Ջյունը քրտնեց քարին,  
Քարը ծպտաց (2, 282):

aaab

Կուզես պայթիր, կուզես ճշա,  
Քեզ մարդու տեղ դնող չկա,  
Զգույշ, գլխիդ փորձանք չգա,  
Սի՛րտ, անցել է սրտի դարը (1, 282):

aabc

Մարեճի, միտս եկար...  
Ու երբ որ միտս եկար,  
Ո՞վ գիտե, թե որտեղից  
Խելք եկավ խելքիս վրա (2, 236):

Ուսումնասիրությունից պարզվում է, որ Հ. Սահյանը առավելապես գործածել է խաչաձև՝ abab և խառը՝ abcb հանգավորում: Բացի այդ, նրա քառատող տներով քառաստեղծություններում հանդիպում են նաև չհանգավորված քառատողեր (abcd):

Գարունը գա,  
Գնամ հասնեն Գյազբելիս...  
Ախ, մեխակներ,  
Մանուշակներ անթառամ:

Ամպը հագնեն,  
Շողքը հագնեն Գյազբելիս,  
Պապիս նստած  
Քարին նստեն տաքանամ (2, 225):

Վերջին դեպքում քառատող տան մեջ հանգավորումը բացակայում է, սակայն, ամբողջ բանաստեղծությանը ծանոթանալով, տեսնում ենք, որ հանգավորումը կատարվում է կից տների միջև՝ երկրորդ տողերը իրար, չորրորդ տողերը իրար հետ: Չհանգավորված քառատողերը կից տներում հանգավորվում են նաև հետևյալ եղանակով՝ բոլոր տների առաջին տողերը և բոլոր տների չորրորդ տողերը (Տե՛ս «Մանուշակներ», 2, 261):

Հ. Սահյանի չորստողանի բանատներում դիֆմական պարբերությունը և տուներ հիմնականում համընկնում են: Որոշ անհամապատասխանություն է նկատվում հանգավորման aaab եղանակի դեպքում: Սակայն ասենք նաև, որ քառատողերի հանգավորման այս ձևը Հ. Սահյանի պոեզիայում սակավ է գործածվում: Օրինակ՝

Երբ ամեն անգամ բացվում է օրը,  
Մտքով մտնում են Դարբասի ձորը...  
Կարծես լսում են մորս օրորը,  
Երբ սոսափում է ծանոթ բարդին (1, 23):

Այս կառույցում դիֆմական պարբերությունը կարծես թե ամբողջանում է կից տների միախմբմամբ և վերջին տողերի մնամահունչ հանգերով՝ բարդին-արտին-որդին-սարահարթին:

Հավասարատող տներ ունեցող բանաստեղծությունների հաջորդ համեմատաբար մեծ խումբը կազմում են *վեցտողանիները*՝ 20 ոտանավոր (4.8 %): Հետաքրքիր է այն, որ Հ. Սահյանը այս նախասիրությամբ կրկնում է իր հոգևոր ուսուցիչներից մեկին՝ Հ. Թումանյանին, որի բանաստեղծությունների մեջ ևս վեցտողանի տները քառատողերից հետո առավել հաճախակի գործածվողներն են<sup>11</sup>: Այս դեպքում Հ. Սահյանը գործածել է հանգավորման մի քանի եղանակ՝ abcadc, abcceb, aabccb, abcbbd, abbcda, abcdec, abcdbc, abcbed, abcdbd, որոնց մեջ գերակշռող է aabccb ձևը՝ 11 բանաստեղծություն: Օրինակ՝

Ես եկել եմ այն աշխարհից,  
Որ ամեն մի սար ու քարից  
Քարե գետ է հոսում,  
Որ բերդն է վիհ ու վիհը՝ բերդ,

<sup>11</sup> Տե՛ս Էդ. Զրբաշյան, Պոետիկայի հարցեր, էջ 356:

**Ուր ժայռերը ժայռերի հետ  
Աչք-ունքով են խոսում (1, 325):**

Այսպիսի դասավորության դեպքում, երբ հանգավորումը կայուն է, ստեղծվում են երեքտողանի կիսապարբերություններ, որոնց համակցումն էլ ապահովում է ռիթմական պարբերության ամբողջականությունը:

Հ. Սահյանին հոգեհարազատ են նաև *երկտողանի* տներով բանաստեղծությունները, որոնք, ըստ վերոբերյալ աղյուսակների, 17-ն են (4 %): Չափածոյի փոքրածավալ այս կառուցվածքը հնարավորություն է տալիս բանաստեղծին հասնելու ապրումի, հոգեվիճակի, տրամադրության առավելագույն խտացման, որն իր հերթին ավելի է ուժեղացնում բանաստեղծության դրամատիզմը: Երկտողանի տներից գատ, Հ. Սահյանը ունի երկու երկտող, որը, ինչպես հայտնի է, առավել հատուկ է ժողովրդական բանավոր ստեղծագործություններին, ասենք՝ հանելուկին, և հազվադեպ է հանդիպում ժամանակակից պոեզիայում.

1. Հաճախ գնում երգ է կարդում մանկատանը,  
Բայց երգի մեջ միայն խելքն է մանկականը (1, 359):
2. Ում վրա ուզում ես մատդ դիր,  
Այս տարի տպում է հատընտիր (1, 359):

Երկտողանի տներով բանաստեղծություններից տասը կառուցված են կից (ա) հանգավորմամբ, իսկ վեցը ունեն խաչաձև (բ) հանգավորում, օրինակներ՝

- |                                  |                                |
|----------------------------------|--------------------------------|
| ա) Հայրենի հեռավոր ձորում        | բ) Երամն անցավ վերից,          |
| Քարերից երկինք է ծորում (2, 65): | Ջորը մորմոք է մանում (2, 266): |

Դրանցում տունն ու ռիթմական պարբերությունը համընկնում են: Միայն մի բանաստեղծության մեջ է խախտվում օրինաչափությունը, երբ երկտողանի հինգ տների բոլոր առաջին տողերը ունեն իրարից տարբեր հանգավորում, իսկ երկրորդ տողը մնում է անփոփոխ՝ միշտ ավարտվելով անտառ բառով.

Ինձնից ինձ խլեց գգվանքդ վայրի,  
Մի վայրի սիրով գրկիր ինձ, անտառ (2, 284):

Հ. Սահյանի երկհատորյակում հավասարատող տների մեջ քանակով հաջորդը *ութտողանի* տներն են, որոնք 13-ն են (3.1 %): Սրանք ունեն տարաբնույթ խառը հանգավորում (abcadbds, abcdbceb, abacdbbc, abcdbbbc, abcacbdba, abcdbdec, abcdebbd ևն): Նույնիսկ նույն բանաստեղծության մեջ բոլոր տները տարբերվում են իրարից, քանի որ հանգավորված են մի քանի ձևերով: Միայն երեքը կանոնավոր կառուցվածք ունեն (aaabcccb), օրինակ՝

Այս ձմեռվա պաղ համբույրով,  
Այս եղևնու անուշ բույրով,  
Հազար ու մի հրապույրով  
Եկավ Նոր տարին:  
Եկավ խաղաղ ու անվրդով,  
Երագներով իր հոգեթով,  
Մերմակ-ճերմակ իր հեքիաթով  
Փարվեց աշխարհին (1, 129):

Այս բանաստեղծության առնչությամբ հարկ է նշել նաև, որ ութտողանի վեց տան մեջ ռիթմական խոշոր միավորները (ութտողանի տները) պարունակում են հնչերանգային ավարտվածությամբ ավելի փոքր՝ չորստողանի միավորներ. արդյունքում ստացվում է տուն տան մեջ: Թերևս բանաստեղծը գիտակցել է սա և այսպիսի ամբողջական կառույցը չի տնատել, որպեսզի բանաստեղծության մի-

նորային մեղեդայնությունը վերանի մածորային տոնական տրամադրության՝ քովանդակությանը համահունչ: Կարծում ենք, սա այն դեպքերից է, որ հակասում է պոեզիայում ստեղծագործողի միայն ինտուիտիվ, ենթագիտակցական ընկալումը կարևորող տեսությանը: Իրավացի է Հ. Էդոյանը, որ խոսելով ստեղծագործության մեջ գիտակցականի ու անգիտակցականի հարաբերության մասին, ծայրահեղություն է համարում թե՛ մեկ, թե՛ մյուս տեսանկյունից գրական ստեղծագործության անջատ վերլուծումը: Նրա կարծիքով, ստեղծագործությունը գիտակցականի և անգիտակցականի ներդաշնակ ու կատարյալ համադրությունն է, առանց որևէ մեկի բացարձակացման<sup>12</sup>:

Հ. Սահյանը ունի 11 եռատող տներով ոտանավոր (տերցետ): Ի դեպ, տերցետը ուսումնասիրողները երբեմն շփոթում են տերցիմի հետ<sup>13</sup>: Մինչդեռ տերցիմը տերցետի տեսակներից է և ունի հանգավորման կայուն ձև՝ aba-bcb-cdc-d, առաջին տողը հանգավորվում է երրորդի, երկրորդը՝ հաջորդ տան առաջին ու երրորդ տողերի հետ և այդպես շարունակ: Բանաստեղծությունն ավարտվում է առանձին կենտ տողով, որը հանգավորվում է վերջին տան երկրորդ տողի հետ: Այդպիսի բանաստեղծություններ ունի Վ. Տերյանը: Հ. Սահյանը տերցիմներ չի գրել: Եռատողերի հանգավորումը հիմնականում կատարվում է կից տների հանգամիավորի կրկնությամբ՝ aab, abc կամ aba դասավորությամբ: Այդպիսով, երկու տների ռիթմական կիսապարբերությունները ամբողջանում են մեկ ռիթմական պարբերության մեջ: Օրինակ (abc)

Դոնապանի ձորում՝	Դոնապանի ձորում՝
Նախաշխարհյան կյանքի	Իրար թև ու թամբի
Ննջած դարեր...	Նստած սարեր... (1, 53)

**Հինգտողանի** տները 9-ն են (2.1 %): Սրանք ևս ունեն բազմազան հանգավորում: Կայուն հանգավորում ունեցող բանաստեղծությունները հինգն են, որոնցից երեքը հանգավորվում են abbba հաջորդականությամբ («Երգ իմ...»՝ չորս տուն, 1, 206, «Ո՛ր եք գնում...»՝ չորս տուն, 1, 228, «Ամենից առաջ»՝ հինգ տուն, 1, 343), մեկը ունի abcab հանգավորումը («Դեռ չփորձած...»՝ հինգ տուն, 2, 36), և մեկն էլ՝ abcdb հանգավորումը («Ես իմ շիկացած...»՝ երկու տուն, 2, 273): Մյուս չորս բանաստեղծություններում կիրառվել են տարբեր մոտեցումներ: Օրինակ, «Դեռ արցունքներ ունի» (2, 69) երեքտնանի բանաստեղծությունը հանգավորվել է հետևյալ կերպ՝ aabca+abccd+abccd:

**Յոթ-, տասը- և տասներկուտողանի** տներով գրված են երկուական բանաստեղծություններ:

Երեք տնից բաղկացած յոթտողանի՝ «Երբ քարափներն աչքիդ» (2, 52) բանաստեղծության տների առաջին հինգ տողերը ունեն խառը հանգավորում, սակայն բոլոր տների վերջին երկու տողերը կրկնվում են («Անիմաստ է արդեն // Թափառելը»)՝ դրանով իսկ ամբողջացնելով ռիթմական պարբերությունը և ուժեղացնելով տների հնչերանգային կապակցվածությունը: Հետաքրքիր հանգավորում ունի նաև հինգ տնից կազմված մյուս յոթտողանի՝ «Քարին տարեկից» (2, 157) բանաստեղծությունը: Բոլոր տները ավարտվում են նույն կրկնակով («... խլել չկարողացան»): Սրանց առաջին վեց տողերը երեք տան մեջ ունեն կից հանգավորում, իսկ մյուս երկուսում՝ խաչաձև:

Տասը և տասներկուտողանի տներով բոլոր բանաստեղծություններում ևս գործածված են այս սկզբունքները, այսինքն՝ վերջին մեկ կամ երկու տողը,

<sup>12</sup> Հ. Էդոյան, Եղիշե Չարենցի պոետիկան, Եր., 1986, էջ 16-17:

<sup>13</sup> Տե՛ս Ա. Հայրապետյան, Համո Սահյանի բանաստեղծական աշխարհը, Եր., 1977, էջ 130:

նույնությամբ կրկնվելով բոլոր տների վերջում, ստեղծում են սահուն ու թմական շարժում և հնչյունական ներդաշնակություն՝ դրանով իսկ տների միջև եղած կապը դարձնելով ավելի պատճառաբանված: Օրինակ՝ «Հայաստանը երգերի մեջ» (1, 30) տասներկուտողանի տներով բանաստեղծության մեջ կրկնվող վերջին երկու տողերը կրկներգի գործառույթ ունեն: Առաջին չորս տներում դրանք հետևյալն են.

**Այսպիսին է Հայաստանը  
Մեր հինավուրց երգերի մեջ:**

Հաջորդ հինգ տներում հինավուրց բառը փոխարինվում է նորոքյա բառով՝ ավելի ընդգծելով բանաստեղծության հիմնական գաղափարը՝ հնի ու նորի հակասությունը, դժվարին անցյալը և հուսատատ ներկան.

**Այսպիսին է Հայաստանը  
Մեր նորոքյա երգերի մեջ:**

Իսկ եզրափակիչ տասներորդ տունը, պահպանելով շարահյուսական կառուցվածքը՝ Հայաստանը ու երգերի մեջ վերջույթները, ունի բոլորովին այլ վերջաբան՝ իբրև ստեղծագործության գաղափարական բարձրակետ.

**Իմ բարձրաբերձ Հայաստանը  
Դեռ չգրված երգերի մեջ:**

Հատկանշական է, որ այս բանաստեղծության տների մեջ ներքին տնատումներ չկան, և բանատողերը զգալի կախվածություն ունեն մեկը մյուսից: Այսպես, վերջակետ դրված է միայն յուրաքանչյուր տան վերջին տողում, իսկ կարճատև արտասանական դադար զգացվում է միայն կրկներգին նախորդող տողում: Ընդհանրապես, այսպիսի կառուցվածքի հանդիպում ենք Սահյանի այն բանաստեղծություններում, որոնցում զգալի են պատումի, էպիկականության տարրերը, երբ ասելիքը շրջանակվում, գեղարվեստական պատկեր է դառնում միայն որոշակի ճանապարհ անցնելուց հետո: Ծարադրանքի կշռույթը ձևավորվում է հենց կառուցվածքային միավորների զուգակցման, համադրման, փոխլրացման ու պատճառաբանման հանրագումարում:

**Ինը-, տասնմեկ- և տասնվեցտողանի** տներով բանաստեղծությունների հանդիպում ենք մեկական անգամ:

Իննտողանի է «Ես ծնվել եմ այնտեղ» (2, 158) վեցտանգի բանաստեղծությունը: Այստեղ կայուն հանգավորում ունեն երրորդ, վեցերորդ և իններորդ տողերը: Որպես ութմական հանախականության ապահովման գործոն, ինչպես նախորդ դեպքերում, վերջին տողերի կրկնության հնարքը չի կիրառվել, թեև այս դեպքում նույնական են առաջին և վերջին տները: Անշուշտ, բանաստեղծության մուտքն ու եզրափակումը միանման դարձնելով՝ բանաստեղծն ավելի է ընդգծում ասելիքի հիմքում ընկած գաղափարը, սակայն էականը այն է, որ Հ. Սահյանը կիրառել է իր նախասիրած տաղաչափական հնարներից մեկը. տունը բաժանել է հավասար կիսատողերի, տվյալ դեպքում՝ եռատողերի, որոնք ամբողջական տողերի վերափոխելիս ստանում ենք եռատող ամբողջական տուն՝ հնչյունական, ներքին ու արտաքին հանգային ներդաշնակությամբ.

**Ես ծնվել եմ այնտեղ- // Զանգեզուրի զարմիկ // Բարձունքների վրա,  
Վերևից եմ տեսել // Արեգակի անեղ // Ծնունդն ամենօրյա,  
Վերևից եմ տեսել // Ամենօրյա կարմիր // Հոգևարքը նրա:**

«Դժվար է եղել քո ուղին» (2, 69) տասնմեկտողանի բանաստեղծությունն ունի ընդամենը երկու տուն: Այստեղ ութմական շարժումն ապահովում է «... եղել աշխարհում» բառակապակցությունը, որը, կրկնվելով տների երկրորդ, չորրորդ,



վեցերորդ, ութերորդ և տասնմեկերորդ տողերում, յուրօրինակ երաժշտականություն է ստեղծում:

Անդրադառնա՞նք հավասարատող տներով գրված ևս մեկ՝ «Ասում եք արծիվը» (2, 356) տասնվեցտողանի բանաստեղծությանը: Այսպիսի տներով ոտանավորը հայոց ժամանակակից պոեզիայում թերևս եզակի է: Առաջին հայացքից թվում է, թե նման խիտ կառուցվածքով բանաստեղծությունը պետք է որ բավականին անհարթ ռիթմ ու հնչյունական շարժում ունենա, սակայն բոլոր հինգ տներն էլ ընթերցվում են մեկ շնչով: Այս բանին մեծապես նպաստում է ամբողջ ստեղծագործության մեջ առկա հետտրական հարցի հնչերանգը: Սակայն զրլխավորն այն է, որ բանաստեղծը յուրաքանչյուր տան առաջին չորս տողը վարպետորեն կրկնում է իբրև եզրափակիչ չորս տող: Բացի այդ, տան մեջ կրկնեցի գործառույթ է իրականացնում՝ «Ասում եք արծիվը // Հավքերի արքան է» երկտողը՝ կրկնվելով բոլոր տների 8 և 9-րդ տողերում: Ստացվում է, որ բանաստեղծության 80 տողից 50-ը կրկնվում են՝ ինչի շնորհիվ ավելի է շեշտվում ոտանավորի հիմքում դրված այլաբանական հարցադրումը՝ ինչո՞ւ է արծիվը հավքերի արքան:

Խոհական գողտրիկ մուշներ են Հ. Սահյանի քառյակները: Անշուշտ, դրանք չունեն այն դասական կատարելությունը, որով հայտնի են, օրինակ, Հ. Թումանյանի քառյակները. թերևս այդ բանի գիտակցությամբ բանաստեղծն ինքն էլ չի ձգտել զարգացնել չափածոյի այս ձևը, թեև հետագայում լույս ընծայված ժողովածուներում ևս կան քառյակներ: Տասնմեկ քառյակներից երեքը հանգավորված են խաչաձև, երեքը՝ քառյակի դասական հանգավորման եղանակով (aaba), չորսը ունեն կից (ընդ որում, դրանցից երկուսը միատարր են՝ aaaa) և մեկը՝ abbc հանգավորում:

Առայժմ անդրադարձանք միայն հավասարատող տներով բանաստեղծություններին, թեև Հ. Սահյանն ունի ոտանավորներ, որոնք չնչին բացառություններով են շեղվում հավասարատող տան կանոնից և ավելի շատ միջանկյալ դիրք են զբաղում կանոնավոր ու անկանոն բանաստեղծությունների արանքում: Ասվածը վերաբերում է հատկապես քառատող տներով բանաստեղծություններին: Օրինակ, 24 բանաստեղծություն կազմված է կանոնավոր քառատողերով, որոնց միայն եզրափակիչ տունն է երկտող: Դրանց շարքում գերակշռում են 4+4+2 կառուցվածքով բանաստեղծությունները, որոնք 12-ն են: Ամենահետաքրքիր կառուցվածքային լուծումը ստացել են 4+2 կաղապարով երեք բանաստեղծությունները («Ջուրն ակունքից...»՝ 2, 120, «Հագիդ հրճվածք...»՝ 2, 230, «Եվ ի՞նչ ես թողել...»՝ 2, 365): Մեկական անգամ հանդիպում ենք նաև 4+4+1 («Միջօրե»՝ 2, 289) և 4+4+4+4+3 («Մամուտներում կորան»՝ 2, 9) կառույցների: Այսպիսի կառույցի յուրահատկությունն այն է, որ համաչափ, ավարտուն բանաստեղծությունը կարծես անսպասելիորեն շարունակություն է ստանում: Սակայն սա նովելային անակընկալ ավարտի տրամաբանությամբ չի արվում: «Անակնկալը» վերստին Հ. Սահյանի լեզվամտածողության խորունկ պարզությունն է. նույն բանաստեղծությունից քաղված կրկնակ երկտողը կամ երբեմն բովանդակությունից բխող այլ եզրակացություն-երկտող ստանում են հիմնական գաղափարը կրող միավորի արժեք և, ավելանալով ոտանավորին, իրենց մեջ խտացնում և շիկացման են հասցնում քնարական ապրումը՝ միանշանակորեն ուժեղացնելով դրա հուզականությունն ու ազդեցիկությունը:

Որոշ վերապահումներով կարելի է նշել տարատեսակ տներով ևս մի քանի ոտանավոր՝ 5+5+2 («Երեկ երգեր էի գրում»՝ 2, 267), 5+5+5+2 («Ծառը նույնն է»՝ 2, 296), 3+3+3+3+3+3+5 («Գարունդ հայերեն է գալիս»՝ 2, 10):

Այսպիսով, հավասար տնատման օրինաչափություններից աննշան շեղում ունեցող բանաստեղծությունները 27-ն են (ընդհանուրի 2.7 %-ը):

Այժմ անդրադառնանք Հ. Սահյանի՝ անհավասարատող կամ անկանոն տներով գրված բանաստեղծություններին: Սովորաբար այս տեսակի բանաստեղծություններում որոշակի օրինաչափություններ չկան, ինչի ցայտուն դրսևորումը հենց Հ. Սահյանի պոեզիան է: Թերևս օրինաչափություն կարելի է համարել միայն այն, որ այս դեպքում էլ տողերի ոչ հավասար քանակը միանշանակորեն պայմանավորված է ոտանավորի թեմատիկ-բովանդակային դրսևորմամբ, քանի որ կոնկրետ պատկերի, հոգեվիճակի, ապրումի բովանդակությանը համապատասխան ռիթմական-շարահյուսական հատույթի ձևավորումից էլ կախված է անկանոն խմբերի կառուցվածքը: Լ. Տիմոֆեևը մասն տների գոյացման հիմքում դնում է հնչերանգային պարբերությունների ավարտվածությունը. «Յուրաքանչյուր ավարտում հնչերանգով պարբերություն, որը պարունակում է մի քանի տող, տուն է կազմում»<sup>14</sup>:

Անկանոն տներով բանաստեղծություններում բացակայում են հավասարատող տան չափորոշիչները, և կարևորվում է իմաստային-շարահյուսական ավարտվածությունը: Հետևաբար, տան երկարությունը կախված է շարահյուսական պարբերույթի երկարությունից: Այս դեպքում բանաստեղծը համեմատաբար ազատ է ձևի «կաշկանդումներից» և ոտանավորի բովանդակության շրջանակներում առավել շարժուն, դիպուկ ու ներդաշնակ կառուցվածք ստեղծելու ավելի մեծ հնարավորություն ունի:

Խնդրո առարկա երկհատորյակում Հ. Սահյանն ունի անհավասարատող տներով 76 բանաստեղծություն (7.6 %): Դրանց շարքում հանդիպում են սովորականից մինչև ամենաարտաոռց ձևեր:

Կան բանաստեղծություններ, որոնցում բանատներից միայն մեկն է անկանոն, օրինակ՝ 4+5+5+5 («Շնորհակալ եմ քեզանից, իմ սիրտ»՝ 1, 288), 6+5+5+5 («Հով եմ արել...»՝ 1, 282), 4+6+4 («Հարցում արի...»՝ 2, 141) ևն:

Մյուս տեսակը այն բանաստեղծություններն են, որոնցում անկանոն տների երկու խումբ կա, օրինակ՝ 8+8+8+4+4 («Երգ Հայաստանի»՝ 1, 34), 8+8+6+6 («Օոգը»՝ 2, 340):

Քիչ չեն նաև երեք և ավելի խմբերով անկանոն տներ ունեցող ոտանավորները, օրինակ՝ 3+5+6+9+8+6+6+9 («Թե ով եմ և ինչ»՝ 1, 339), 7+8+4+8+3+7+4+1 («Ինչո՞ւ հիշեցրի»՝ 1, 298), 8+8+7+55 («Թե հնար լիներ»՝ 2, 162), 10+5+8+2 («Գալիս է հոտը»՝ 2, 9) ևն:

Անշուշտ, անհավասարատող բանաստեղծությունների մեջ քանակով ամենաշատը երկուտանանիներն են՝ 33, որոնք կառուցված են ամենաանկանխատեսելի տարբերակներով: Օրինակ, «Բանաստեղծները» (2, 262) ստեղծագործության կառուցվածքը 10+61 է: Այստեղ առաջին տասը տողը կարծես բանաստեղծության նախաբանը լինի և նախապատրաստում է հիմնական կառույցի մուտքը: Հակառակ պատկերն ունի «Սպառնալիք» (1, 354) բանաստեղծությունը՝ 68+4 կառուցվածքով: Բուն ասելիքը եզրափակում է մի քառատող, որն ընդհանուր կառույցի վերջաբանն է դառնում: Նշենք այս խմբին պատկանող ևս մի քանի բանաստեղծություն՝ «Երկու լույթուն», (14+5՝ 2, 399), «Ինչպես դիմացավ» (23+10՝ 2, 280), «Ստվեր դառնամ» (12+8, 1, 43), «Ես բախտավոր եմ...» (8+9, 1, 247), «Ասում են իմ երգերում» (12+7, 2, 54) ևն:

Անհավասարատող տներով բանաստեղծությունները սահյանական վարպետության անվիճելի դրսևորումներն են: Դրանցում ակնառու են ռիթմի ու հնչերանգի նուրբ զգացողությունը: Ասվածն ավելի շոշափելի դարձնելու համար դիտարկենք 3+7+6+1 կառուցվածքով հետևյալ բանաստեղծությունը.

<sup>14</sup> Л. И. Тимофеев. Очерки теории и истории русского стиха. М., 1958, с. 148.

## ԵՎ ՆՈՐԻՑ ԳՆԱ

Մայրամուտն, ավա՛ղ, մոտ է, բարեկամ:  
Քո ստվերն արդեն մի քանի անգամ  
Երկար է քո այդ երկար հասակից:

Քո ստվերը քո ոտքերի տակից,  
Քարափններն ի վար,  
Երկարել և այն հովիտն է հասել,  
Որտեղից որ դու ճանապարհ ընկար  
Ադամամութին:  
Ծանապարհ ընկար  
Ու դեռ չես հասել լեռան գագաթին:

Քո գլխի վերև ծածանվող ամպի  
Թավշյա ստվերով  
Սրբիր ճակատիդ քրտինքը մաքուր  
Եվ նորից գնա,  
Որ դիմավորես մայրամուտը քո  
Լեռան գագաթին...

Լեռան գագաթին օրն ուշ է մթնում (1, 286):

Իր կյանքի կես դարն ապրած բանաստեղծը փորձում է իմաստավորել անցած ուղին: Առաջին՝ երեքտողանի տունը, որ կարծես բանաստեղծության մուտքն է, տազնապի, ափսոսանքի խտացված արտահայտություն է, երբ առաջացած տարիքի հետ մարդը ավելի ու ավելի է գիտակցում իր կյանքի մայրամուտի մոտիկությունը: Ապրած կյանքի այլաբերական միավորը ստվերն է: Հաջորդ՝ յոթտողանի տան մեջ նա վերհիշում է իր կյանքը՝ ադամամութից մինչև տվյալ պահը, և գիտակցում, որ դեռ անելիքներ ու անցնելիք ճանապարհ ունի: Այդուհանդերձ, բանաստեղծը հրաշալիորեն գիտակցում է, որ իրավունք չունի երկնչելու, հուսահատվելու և պարտավոր է շարունակել իր ուղին, որպեսզի ավարտին հասցնի կիսատ գործերն ու կարողանա հանգիստ խղճով «մայրամուտը դիմավորել լեռան գագաթին»: Այս պատկերը արտահայտվում է արդեն ոչ թե յոթ, այլ վեց տողով, ինչը, թերևս, կյանքի մայրամուտի մասին խորհող մարդու տրամադրության որոշ անկում է խորհրդանշում: Բանաստեղծության վերջին՝ մեկտողանի տունը՝ «Լեռան գագաթին օրն ուշ է մթնում», ստեղծագործության գաղափարական բարձրակետն է, կյանքին խոհափիլիսոփայական խոշորացուցով նայող բանաստեղծի կարճ, դիպուկ իմաստավորում-եզրակացությունը:

Անդրադառնանք նաև Հ. Սահյանի չտնատված բանաստեղծություններին, որոնց ընդհանուր թիվը 446 է (44.6 %, տե՛ս աղյուսակ 3):

Ամենափոքրը «Լուսնյակ գիշեր է» (2, 347) հինգտողանի ոտանավորն է: Հ. Սահյանն ունի այդպիսի ընդամենը մեկ բանաստեղծություն: Ամենամեծը «Հայրենի գյուղ» (2, 93) բանաստեղծությունն է, որը կազմված է 156 տողից: Ի դեպ, այն ծավալով և թեմատիկ ընդգրկունությամբ ավելի շուտ քնարական պոեմ է հիշեցնում: Բանաստեղծի նախասիրությունն անշուշտ ութտողանի բանաստեղծություններն են, որոնց թիվը 73 է (տրիոլետները այս շարքից դուրս են): Դրանք հանգավորվել են տարբեր կերպ, սակայն գերակշիռ մասը, որպես կանոն, ունի նույնահանգ 2-րդ, 4-րդ և 8-րդ տողեր, և ակնառու է ներքին տնատումը (երկու քառատող): Մյուս տողերը հանգավորված են կից, խաչաձև և խառը եղանակներով: Կան նաև մի քանի օկտավային հանգավորումներ:

## Չտնատված բանաստեղծությունների թիվը՝ ըստ տողերի

Տողերի Թիվը	Բանաստ. Թիվը	Տողերի Թիվը	Բանաստ. Թիվը	Տողերի Թիվը	Բանաստ. Թիվը	Տողերի Թիվը	Բանաստ. Թիվը
5	1	10	28	15	11	20	10
6	16	11	15	16	29	21-29	45
7	9	12	33	17	21	30-39	41
8	73	13	8	18	13	40-49	19
9	20	14	14	19	8	50-99	25
						100 և ավելի	7

Հ. Սահյանը հաճախ է գրել 10-, 12-, 16-տողանի բանաստեղծություններ, ուրոնց թիվը համապատասխանաբար 28, 33, 29 է:

Հատկանշական է, որ նա չի խուսափել կենտ թվով տողերից, ինչպես անհավասարատող, այնպես էլ չտնատված բանաստեղծությունների դեպքում: Չտնատված այդպիսի բանաստեղծությունները 107-ն են:

Ըստ էության չտնատված բանաստեղծությունները ունեն իրենց ներքին տնային բաժանումը, որը հիմնականում կախված է հնչերանգից: Ըստ այդմ, ներքին տների տողերի թիվը պայմանավորված է շարահյուսական-արտասանական ավարտվածությամբ: Սրանից բխում կամ թելադրվում է նաև հանգավորումը: Օրինակ, «Հողմը անտառում» (2, 307) բանաստեղծության ներքին տնատումը կատարվում է եռատողերով՝ aab հանգավորմամբ՝ եռատող կիսապարբերությունների հնչերանգային ամբողջականությանը համապատասխան: Իսկ մեկ ուրիշ ոտանավորում («Արեգակից խրտնած», 2, 286, 21 տող) շարահյուսական-արտասանական ավարտում միավորներով ներքին տնատումը կատարված է հետևյալ կերպ՝ 3+2+2+5+2+2+5: Ընդ որում, կիրառված են հանգավորման բոլոր տեսակները, բացի օղակաձևից:

Կառուցվածքային այս բազմազանությունը նկատի առնելով է Ս. Աղաբաբյանը գնահատել Հ. Սահյանի վարպետությունը բանաստեղծության հարցում. «Երբ Համո Սահյանն ասում է, որ իր բանաստեղծական տունը հին է, «տաստի տան պես», չես կարող համաձայնվել նրա բանավեճային թուուցիկ կարծիքին: Նրա բանաստեղծությունը բնակվում է մի այնպիսի տան մեջ, որ կառուցվածքով ձգտում է նոր ձևառնումի, այսինքն՝ կրում է Սահյանի անհատական ճաշակի ու դարի տիրապետող ճաշակի համատեղ կնիքը: «Հայկական տունը» բազմազան կերպարանափոխությունների է ենթարկվել, նոր տեսք է ստացել և նոր բանաստեղծի համար չեն կարող նեղ չլինել թե հին տան դռները, թե ճնշիչը՝ նրա առաստաղը: Տունն էլի տուն է մնում, բայց նոր հարմարություններ են ավելանում»<sup>15</sup>:

Հ. Սահյանի երկհատորյակում բանաստեղծի կառուցման սկզբունքները ուսումնասիրելիս մեր ուշադրությունը գրավեց մի հետաքրքիր հանգամանք ևս՝ անվերնագիր ու վերնագրված բանաստեղծությունների հարաբերակցության խնդիրը: Ընդհանրապես, յուրաքանչյուր բանաստեղծ այս հարցին ունի իր մոտեցումը. ոմանք ձգտում են անպայմանորեն վերնագրել բանաստեղծությունը, մյուսները, ընդհակառակը, ամեն կերպ խուսափում են վերնագրից (նշենք, որ խոսքը քնարական մեծածավալ ստեղծագործությունների՝ պոեմ, բալլադ ևն, մասին չէ): Կարծում ենք, սա ևս անմիջական կապ ունի բանաստեղծի մտածողության կերպի ու ընկալման հետ, որովհետև հաճախ բանաստեղծը ոտանավորի վրա ավելի քիչ ժամանակ է ծախսում, քան դրա վերնագրի:

<sup>15</sup> Ս. Աղաբաբյան, XX դարի հայ գրականության զուգահեռականներում, գ. 2, 1984, էջ 44:

Հ. Սահյանի երկհատորյակի առաջին հատորում 423 բանաստեղծությունից անվերնագիր են 123-ը (29 %), իսկ երկրորդում 577-ից անվերնագիր են 338-ը (58,5 %)։ Ակնհայտ է, որ ստեղծագործության երկրորդ շրջանում անվերնագիր բանաստեղծությունների թիվը կրկնապատկվել է (նկատենք, որ բանաստեղծը ծավալուն գործերը միշտ վերնագրել է)։ Այս հանգամանքը կարելի է բացատրել մի քանի դիտարկումներով։ Սակայն, կարծում ենք, հիմնականն այն է, որ Համո Սահյանը հայ նորագույն շրջանի գրականության մեջ իր հաստատուն տեղը գտավ և դարձավ նրա դիմագիծը բնորոշող ստեղծագործողներից մեկը հենց այս շրջանում։ Մի առիթով նա խոստովանել է. «Իմ բանաստեղծական կենսագրությունը հիմնականում սկսվում է «Մայրամուտից առաջ» գրքով»<sup>16</sup>։ Գրականագետները ևս ավելի կարևորում ու արժևորում են բանաստեղծի ստեղծագործության երկրորդ շրջանը (1960-80-ականներ)։ Հետևաբար կարող ենք եզրակացնել, որ այս տարիներին լույս տեսած ժողովածուներում բանաստեղծը ավելի բծախնդիր ու պահանջկոտ էր իր բառի, խոսքի նկատմամբ, ուներ ավելի խոհական մոտեցում և չէր կամենում վերնագիր ընտրել պարզապես միայն վերնագրած լինելու համար։

Մեր ենթադրությունը ավելի համոզիչ դարձնող մի ուշագրավ իրողություն էլ կա։ Ստեղծագործության առաջին շրջանի ժողովածուների վերնագրերը ևս («Ռոտանի եզերքին», «Առագաստ», «Սլացքի մեջ», «Միաձանը տափաստանում» ևն) իրենց խոհական-խորքային ենթիմաստներով զիջում են երկրորդ շրջանի ժողովածուների վերնագրերին («Մայրամուտից առաջ», «Քարտիկների երգը», «Սեզամ, բացվիր...», «Դադի ծաղիկ», «Քարե պատարագ» ևն)։

Այսպիսով, քննարկելով Համո Սահյանի ստեղծագործության մեջ բանաստեղծական տան կառուցման խնդիրները, հանգում ենք այն եզրակացությանը, որ բանաստեղծի մտածողությունը առանձնանում է իր ավանդապահությամբ, դասական ձևերին հավատարմությամբ, ինչով էլ բացատրվում է բանատան կառուցման ավանդական ձևերի ընտրությունը։ Միևնույն ժամանակ չի կարելի չառանձնացնել կիրառված ձևերի ներքին բազմազանությունն ու ուղիղական միավորների ինքնատիպ գործածությունը, որով էլ պայմանավորված է Հ. Սահյանի չափածոյի երաժշտականությունն ու հուզականությունը։ Կարծում ենք՝ ներդաշնակ կլանքով «ապրող» բնությունը (Տիեզերքը), որ եղել է բանաստեղծի ստեղծագործության մղիչն ու ատաղձը, նրա ապրումների ու զգացողությունների անմիջականության ու բնականության կրողը, ինքնին թելադրել է լեզվական այն ներդաշնակությունը, կառուցվածքային ձևերի համաչափությունն ու բառի հանդեպ հոգատարությունը, որ առկա է Հ. Սահյանի բանարվեստում։

**А. Э. ОВАКИМЯН - Принципы строфического построения в поэзии А. Сагияна.** - В стихосложении А. Сагияна большое значение имеет строфика, которая и исследуется в настоящей статье. На большом количестве примеров показано, что поэт отдает предпочтение классическим формам строфы. Например, четверостишие у Сагияна, как, впрочем, и во всемирной поэзии, оказывается самым востребованным видом строфы.

Итак, строфика Сагияна вполне традиционна, и форма строфы созвучна у него тематике стиха. Однако при внешней классичности и стабильности строфической формы Сагияну удалось разнообразить и обогатить ее ритмическими и фонетическими средствами.

<sup>16</sup> «Գարուն», 1984, № 9: